

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՅՈՒ «ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆՆ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՁԵՌԱԳԻՐԸ

Տիեզերագիտական հարցերին միջնադարյան հայ հեղինակներից շատերն են անդրադարձել. Եղնիկ Կողբացի, Հովհաննես Սարկավազ, Մարտիրոս Ղրիմեցի, Գրիգոր Տաթևացի և ուրիշներ։ Սակայն նրանցից երկուսն են միայն, որ հատուկ աշխատություններ են գրել տիեզերագիտական բովանդակությամբ։ Դրանցից առաջինը VII դարի մաթեմատիկոս Անանիա Շիրակացին է, մյուսը՝ XIII դարի տաղերգու Հովհաննես Երզնկացին։

Շիրակացու տիեզերագիտական աշխատությունները՝ «Տիեզերագիտութիւն»<sup>1</sup> և «Յաղագս երկնային շարժմանն»<sup>2</sup> հրատարակվել են, թարգմանվել, հանգամանորեն ուսումնասիրվել ու գիտական շրջանառության մեջ դրվել։ Նույնը, ցավոք, չի կարելի ասել Հովհաննես Երզնկացու «Յաղագս երկնային շարժմանն» աշխատության մասին, որը հրատարակվել է նոր Նախիջևանում 1792 թ. Հովսեփ Արզուբյանի կողմից փոքր տպարանակով, աչժմ պահվում է հնատիպ գրքերի հավաքածուներում և մատչելի չէ բնթերցողների լայն շրջանին։ Անհրաժեշտ ենք համարում բնագիրը հրատարակել երկու տարբերակով՝ նախնական, որը համառոտ է, և փոփոխության ենթարկվածը, որն ընդարձակ է։

<sup>1</sup> Շիրակացու տիեզերագիտական աշխատության համառոտ խմբագրությունը առաջին անգամ հրատարակել է պրոֆ. Ք. Պատկանյանը Պետերբուրգում 1877 թ., «Մնացորդ բանից» Շիրակացու բնագրերի հավաքածուի մեջ (էջ 127—129), իսկ այդ բնագրի ընդարձակը լույս է տեսել Երևանում, 1940 թ. Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության մեջ։ Ռուսերեն են թարգմանել Ք. Ս. Տեր-Գալվյանը և Ս. Ս. Արևշատյանը, 1962 թ. «Космография» վերնագրով աշխարհարար են թարգմանել Գ. Բ. Պետրոսյանը և Ա. Գ. Աբրահամյանը 1979 թ. «Անանիա Շիրակացի» հայ մատենագիրների մատենաշարով։

<sup>2</sup> Շիրակացու «Յաղագս շրջագալութեան երկնից» աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է Գ. Տեր-Մկրտչյանի «Աբրահատ» ամսագրում 1896 թ.։ Հետագայում այդ բնագրերը վերահրատարակվել են Շիրակացու «Մատենագրության» մեջ (էջ 313—321)։ Ռուսերեն է թարգմանվել Ք. Տեր-Գալվյանի և Ս. Արևշատյանի վերջ հիշված աշխատության մեջ (էջ 100—107), իսկ աշխարհարարը Գ. Բ. Պետրոսյանի և Ա. Գ. Աբրահամյանի «Անանիա Շիրակացու» թարգմանության մեջ (էջ 120—126)։

Հովհաննես Երզնկացու տվյալ աշխատությունը՝ տփսիսցի Ումեկի որդի Քարեմատինին պատկանող Մոզնի եկեղեցում նրա կարգացած դասախոսությունն է, որը Քարեմատինի եղբայր Վախթանգի խնդրանքով գրի է առել 1284 թ. հետո: Այդ մասին հեղինակն իր աշխատության ներածության (սնախաղորոթեան) մեջ հայտնում է. «Թվ. ՉԼԳ (1284) պատահեաց դալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեանս աշխարհիս Վրաց, ի հռչակաւոր և մեծ մայրաքաղաքս ի Տփսիս, Փայտակարան կոչեցեալ, հանդիպեցաւ մեզ խօսիլ բանս քարոզութեան ի դուռն եկեղեցոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխանին Հայոց պարոն Քարեմատինին, զոր շինեալ էր աստուածասէր և բարի հոգի հայրն նորա պարոն Ումեկն: Եւ էր խաւեցեալ բանն յաղագս երկնային շարժման: Վասն որոյ ախորժելի եղև զուարդամիտ պատանւոյն Վախթանկա... Սայ խնդրեաց ի մէջ յաղագս երկնի և նորին շարժմանն»:

Հովհաննես Երզնկացու անձնավորութեան և նրա աշխատությունների շուրջը բանասիրության մեջ բանավեճեր են եղել. նույն ժամանակներում ապրող երկու երզնկացիների՝ Պլուզ կոչվող Հովհաննես Երզնկացուն և Մործորեցի մականունով Հովհաննես Երզնկացուն շփոթել են իրար հետ: Վերջերս միայն մի քանի ուսումնասիրողների հաջողվեց (Հ. Քյուրտյան, Լ. Խաչիկյան, Ա. Սրապյան և է. Բաղդասարյան) համոզիչ փաստերով պարզել, որ այդ անձնավորությունները տարբեր են: Ա. Սրապյանը, որն այդ հարցով հանգամանորեն է զբաղվել, հանգել է հետևյալ վերջնական եզրակացության. «Այս ամենից (այսինքն՝ բերած մի շարք փաստերից—Ա. Ա.) հետևում է, որ Պլուզ և Մործորեցի Հովհաննես Երզնկացիները երկու տարբեր մատենագիրներ են: Նրանց կենսագրությունները, ինչպես և ստեղծագործությունները որոշակի տարբերվում են իրարից: Նրանք նույնացվել են թյուրիմացաբար միմիայն հետագա դարերում, համանուն լինելու պատճառով: Բանասիրական այս թյուրիմացությունը լուծելով միայն հնարավոր է դառնում ճիշտ գնահատել միջնադարի խոշոր բանաստեղծ ու մասնագիր Հովհաննես Երզնկացի Պլուզի ստեղծագործությունը» [1, էջ 37—38]:

Պլուզ և Մործորեցի Երզնկացիներին իրար հետ շփոթելու հետևանքով «Յաղագս երկնային շարժմանն» աշխատությունը վերագրվել է Հովհաննես Մործորեցուն: Շփոթության տեղիք է տվել այդ բնագրի հրատարակիչ Հովսեփ Արղուիսյանը, որը հրատարակությունը վերնագրել է «Տետրակ համառօտ և լի իմաստախոհ բանիւք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յովհաննու Երզնկացույ, ու և ասի Մործորեցի, սակս սքանչելարուհստ արարչագործութեանցն Աստուծոյ, եւ յաղագս թուոյ երկնից շարժման լուսաւորաց, կարգէ տարերաց, եղանակաց, տարւոյ և ալոց իրաց բնականաց»:

նույն սխալը թույլ է տվել նաև պրոֆ. Մ. Էմինը: Բնագրի ուսու-  
րին թարգմանության առիթով իր գրած ներածության մեջ նա աշխա-  
տության հեղինակ է համարել Հովհաննես Մործորեցուն և թարգմանու-  
թյունը վերնագրել. «Космографический трактат Иоанна Дворцо-  
реци» [2]:

Հիշյալ հեղինակների սխալը կրկնել է նաև պրոֆ. Ավ. Տեր-Պո-  
ղոսյանը իր «Բիդյուլահան մարի զարգացումը Հայաստանում» գրքում  
[3, էջ 352]:

Մեր կատարած ձեռագրային ուսումնասիրություններից պարզվեց,  
որ հնագույն որոշ քնդորինակություններում որոշակի նշվում է, որ «Յա-  
ղազս երկնային շարժմանն» աշխատության հեղինակը, իրոք, Հովհան-  
նես Պլուզ կոչվող Երզնկացին է: Այսպես, օրինակ, Մատենադարանի  
№ 750 ձեռագրում սովյալ աշխատությունը վերնագրված է. «Պլուզ Յով-  
հաննէս վարդապետի յաղազս երկնի...» (թ. 177ա):

Հովհաննես Երզնկացի Պլուզի անձնավորության մասին հետևյալն  
է հայտնի: Մնվել է Մեծ Հայքի Նիկեյաց զավառի Երզնկա քաղաքում  
մոտավորապես 1225—1230 թվականներին:

Ժամանակակիցները նրան հիշում են Պլուզ մականունով: Ուսում-  
նասիրողներից ոմանք կարծում են, որ Պլուզ մականունը նրան տրվել է  
կարճահասակ լինելու, իսկ մյուսները՝ կապուտաշյա լինելու պատճա-  
ռով: Նա հիշվում է նաև «քաղցրիկ» մականունով, հավանաբար իր հե-  
ղինակած գեղեցիկ տառերի շնորհիվ:

Երզնկացու մանկությունն անցել է հայրենի քաղաքում: Նախնա-  
կան կրթությունը ստացել է Լուսավորչի լեռներում գտնվող Ս. Մինասի  
անապատում: Հետագայում սովորել է Նորվիրապի դպրոցում, որի ու-  
սուցչապետն էր նշանավոր պատմիչ Վարդան Արեւելցին: Այս մասին  
«Յաղազս երկնային շարժմանն» աշխատության առաջաբանում նա նշում  
է, որ եղել է «աշակերտ հոգևից հարն վարդապետին Վարդանայ՝ սպա-  
սաւոր սուրբ գրոց բանի»: Նորվիրապի դպրոցում նա հանդամանորեն  
ուսումնասիրել է պատմություն, լեզու, դրականություն, փիլիսոփայու-  
թյուն, տիեզերագիտություն, տոմար, աստվածաբանություն և այլ գի-  
տություններ: Տեղեկություններ կան, որ նա 1272—1273 թվականներին  
գտնվել է Երզնկայի Թիւ ավանում, իսկ 1280 թ.՝ Երզնկայում, որտեղ  
գրել է նշանավոր կանոնական խրատները՝ կազմակերպված «եղ-  
բայրության» (համբարության) համար: 1281 թ. գնացել է Երուսաղեմ և  
վերադառնալիս եկել Կիլիկիա ու այցելել Լեոն III Թագավորին (1269—  
1289) և Հակոբ Կլայեցի (1268—1286) կաթողիկոսին: Նրանք սիրով են  
ընդունել Երզնկացուն և հանձնարարել տեղի ուսանողության համար

դասախոսություններ կարդալ հայոց լեզվի քերականության մասին, որը նա հոժարաբար կատարել է: 1281 թ. կաթողիկոսը նրան, որպես պատվիրակ, կանոնական հրահանգներով ուղարկել է Թեոդոսիա: Այնտեղից Կիլիկիա վերադառնալով, շրջել Կիլիկիայի բազմաթիվ վայրերում (Դրազարկ, Սիս, Անավարզա և այլն) ու գիտական և աստվածաբանական քարոզներ կարդացել: 1284 թվականին վերադարձել է Կիլիկիայից և անցել Տփլիս, ուր և քաղաքի կաթողիկե եկեղեցում կարդացել մեզ հետաքրքրող «Յաղագս երկնային շարժման» թեմայով դասախոսությունը: 1291 թվականին Երզնկացին հայտնվում է Երզնկայի Ս. Մինաս անապատում: Այնուհետև, կաթողիկոսի համաձայնությամբ, նա ուղարկվում է Երզնկա և այնտեղ մնում մինչև իր մահը (1293 թ.):

Բանասիրության մեջ Հովհաննես Երզնկացու «Յաղագս երկնային շարժման» աշխատությունը թյուրիմացությամբ վերադրվել է XV դարի տոմարագետ Հակոբ Ղրիմեցուն: Այդ սխալը թույլ է տվել բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը: Նա Շիրակացու «Յաղագս շրջագայութեան երկնից» աշխատության հրատարակության ծանոթագրության մեջ, խոսելով Շիրակացու այդ բնագրից հետագա օգտվողների մասին, գրել է. «Ձանց առնելով մյուս տոմարագետներից բերված նման, փոխ առնելված, հատվածների երկար շարքը, բավականանա՞նք դնելով վերջին նշանավոր տոմարագետներից մեկի՝ Հակոբ Ղրիմեցու, մի ամբողջ հատվածը, որ կարելի է ասել «Յաղագս Շրջագայութեան երկնից» երկասիրության մի նոր խմբագրությունն է, հետաքրքրական լեզվով և բովանդակությամբ» [4, էջ 36]: Եվ բերել է օգտվող հեղինակի տասը գլուխների բովանդակությունը: Պարզվում է, որ Գ. Տեր-Մկրտչյանը, ինչպես ցույց է տվել Ավ. Տեր-Պողոսյանը, շփոթել է. № 2048 (նոր համարով № 2018) ձեռագրից իր հրատարակած բնագրի հեղինակն է ո՛չ թե Հակոբ Ղրիմեցին, այլ՝ Հովհաննես Երզնկացին, որի աշխատությունը ձեռագրում ընդօրինակված է 21ա էջից մինչև 93բ էջը: Այդ ընդօրինակությունը վերնագրված է. «Յաղագս երկնային շարժման նուաստ Յովհաննեսի Երզնկացու շարագրեալ յիմաստնոցն բանից ի խնդրոյ բարեպաշտ և երկիւղազարդ պատանուոյն պարոն Վախթանկայ» (թ. 91ա):

Նույն սխալը կատարել է նաև Մ. Աբեղյանը. հենվելով Գ. Տեր-Մկրտչյանի տեղեկության վրա, գրել է. «Վերջին նշանավոր տոմարագետներից մեկի՝ Հակոբ Ղրիմեցու մի ամբողջ հատվածը, որ կարելի է ասել Շիրակացու «Յաղագս շրջագայութեան երկնից» երկասիրության մի նոր խմբագրություն է» [5, էջ 386]:

Մեզ հասած ձեռագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Հովհաննես Երզնկացու «Յաղագս երկնային շարժման» աշխատությունը,

որը, ինչպես ասվել է, գրված 1284 թ., հետագա ընդօրինակությունների ժամանակ ենթարկվել է զգալի փոփոխությունների: Ընդօրինակող գրիչները, բայց իրենց նախատիրության, խմբագրել են և ավելացրել որոշ հատվածներ: Ընդօրինակողների մեծ մասը կրճատել են հեղինակի ներածականը («նախադրությունը») թեև Երզնկացին ընդօրինակողներից խնդրել է այդ շանկ: «Արդ՝ որ գրէք յազագս աւգտի զսակաւ աշխատութիւնս մեր,— խնդրել է նա,— գրեսցիք և զայս նախադրութիւնս և զրան յիշատակի անուան խնդրողաց, և զրոգ սորին գրեալ լիջիք և զուր ի գիրն կենաց»: Վերջում, չգրելու համար նույնիսկ սպառնացել է պատժով: «Եւ որ ծուլանայ և թողու զսա, ոչ լիցի առանց պատժոց. իբր շուով աշխատութեանց զիւր սակաւն զին տալ ոչ կամեցաւ այլոց»: Սակայն այդ նշանակություն չի ունեցել: 1309 թ. ընդօրինակված ձեռագրից շուրջ հարյուր տարի հետո մի ձեռագրում (Մատենադարան, № 2173) գրիչը ներածական գլուխն արդեն բաց է թողել: Նույն կերպ են վարվել և այլ ընդօրինակողներ:

Ընդօրինակող գրիչները Պլուզի նախնական բնագրում կատարել են այլ կոպիտ միջամտություններ: Իր առաջաբանում Երզնկացին նշել է, որ ինքն աշխատությունը գրել է «Համառատ բանի և աշխարհական խաւիք՝ վասն զիւրահասկանալի լինել ընթերցողաց»: Դա թանկարժեք մի տեղեկություն է այն իմաստով, որ հեղինակը իր աշխատությունը գրել է, եթե ոչ զուտ աշխարհաբար, այլա նրան մոտիկ լեզվով: Երզնկացու այդ ոճը զուր չի եկել ընդօրինակողներից ոմանց, ուստի նրանք տեղ-տեղ կատարել են լեզվական և ոճական փոփոխություններ՝ համաձայնեցնելով գրաբարին և նրա օրինաչափություններին: Կատարված բազում այս փոփոխությունների հետևանքով փաստորեն ստացվել է տիեզերագիտական մի նոր բնագիր, որը զգալիորեն տարբերվում է նախնականից:

Հովհաննես Երզնկացին ավելա աշխատությունը գրելիս սկզբնադրույր է ունեցել հիմնականում Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունը» և՛ «Յազագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցու» աշխատությունները, որոնցից նա շատ է օգտվել: Երզնկացու Շիրակացուց օգտվելու փաստը մատնացույց են արել ուսումնասիրողներից ոմանք: Այդ այնքան ակնբախ է, որ ավելորդ ենք համարում օրինակներ բերել: Փաստ է, որ Շիրակացու տիեզերագիտության բնագրերից օգտվել է ո՛չ միայն Հովհաննես Երզնկացին, այլև միջնադարյան բոլոր մատենագիրները, որոնք ցանկացել են խոսել տիեզերագիտական հարցերի շուրջը:

Հովհաննես Երզնկացին հանդես է եկել հայ ժողովրդի պատմության ծանր ժամանակաշրջաններից մեկում: Հայաստանը նվաճված էր

մոնղոլների կողմից, իսկ Կիլիկիայի հայոց պետականությանը սպառնում էր եգիպտական սուլթանությունը: Հայ ժողովուրդը կենաց և մահու պայքարի մեջ էր:

Հայ ժողովրդի այս ծանր վիճակը փորձեց տմարդի ձևով օգտագործել վատիկանը. ժամանակի հայ քաղաքական և հոգևորական շրջահայաց գործիչները քաջ գիտակցելով, որ ազգային սուվորություններից հրաժարվելը նրանց կտանի դեպի ձուլում, հարկադրված եղան պայքարի մեջ մտնել ունիթորության դեմ: Եվ այդ պայքարի առաջին գծի վրա գտնվեց Հովհաննես Երզնկացին: Ըստ տեղեկությունների նա շրջագայել է Հայաստանում և Կիլիկիայում և ամենուրեք հանդես եկել ունիթորության դեմ, գրել բանավիճական աշխատություններ:

Նուսելով Հովհաննես Երզնկացու գաղափարական ուղղության մասին, պետք է նշել, որ նա իր ժամանակի բարձր վարդապետ ունեցող եկեղեցականներից է եղել: Նրա գաղափարախոսությունը ամբողջովին հիմնված է քրիստոնեական ուսմունքի վրա:

Հովհաննես Երզնկացու «Յաղագս երկնային շարժման» աշխատության մեջ քննարկված տիեզերագիտական հարցերը ժամանակակից գիտության համար ունեն միայն պատմական արժեք. նրանք հնարավորություն են տալիս մեզ պատկերացնելու թե ինչպես են ըմբռնել ու բացատրել բնական երևույթները:

«Յաղագս երկնային շարժման» աշխատությունը շատ ընդօրինակված բնագրերից է. միայն Մաշտոցի անվան մատենադարանում ոչ լրիվ սովյալներով հանդիպում ենք 45 ձեռագրերում:

Մեր հրատարակության համար հիմք է ծառայել Մաշտոցի անվան մատենադարանի № 2174 ձեռագիրը, որը թուղթ է, գրված է միասյուն, բուրբաղի: Սա ընդօրինակված է 1ա-ից—10ա էջերում: Ձեռագրում Երզնկացու տվյալ աշխատությունից բացի ընդօրինակված են նաև «Պիտոյից գիրքը», Եպիփան Կիպրացու «Խօսք յաղագս առիւծոս» (բարուխօս), ժամանակագրությունը (որը հասցված է մինչև 1297 թ.) և այլն:

Տվյալ գրագիրը մեզ հասած հնագույն ընդօրինակություններից է, այն գրված է 1309 թ.: Ընդօրինակող գրիչն է տեղի Ավետիսյանը, որը ձեռագրում թողել է հետևյալ փոքրիկ հիշատակարանը. «զմեղուցեալ և ղանարժանս զբահանայս զտէր Աւագ գրողս յիշեցէք աղաւթիւք ով հայրք և եղբայրք և անմեղադիր լերուք խոշորութեան գրոցս և սղալանաց, զի ծով աշխարհի ի տարակուսեալ ծփի ի մէջ մեղաց» (թ. 227ա):

Հովհաննես Երզնկացու «Յաղագս երկնային շարժման» ընդարձակ տարբերակը հրատարակվում է Նոր Նախիջևանի հնատիպ բնագրից, որի

Համար հիմք է ծառայել Մատենադարանի № 2018 (հին համարով № 2048) ձեռագիրը, քնդորինակված 1621 թ.:

1ա //Յաղագս երկնային շարժմանն նուստ Յովհաննէս վաբդապետի  
երզնկացոյ շարադրեալ յիմաստեոցի, ի խնդրոյ բարեխաշտ և  
եկրկեղազարդ պատանոյն պարոն Վախրաւելայ

Ամենայն որ, որ դրան, որ է ծնունդ անմարմին մտաց, որով  
ի բարտիս կամի գրոշմել, պարտի և զնորին պատճառն յանդի-  
ման կացուցանել, որպէս, զի վերջին ժամանակին ծնրնդոց մարդ-  
կան՝ յամարութիւն և սէր խնդրողի բանին և աշխատանք տու-  
ղի խնդրոյն մի ծածկեաց ի բանասիրաց և աշխատատէր անձանց,  
զի կարատրն բանի, իբրեւ զերկիր ծարաւտս զցաւ՝ քաղցրու-  
թեան երկնի խնդրեսցեն, և ապա սպասաւորքն բանի, իբրեւ զամբ  
բնդունակ ցաւոյ զառեակն յանսահման ծովէ իմաստից և գիտոց  
հոսմանէ, յաղագս ծուլութեան մի արդեւցեն:

Իբ Ըստ որում և ես՝ նուստ Յոհաննէս երզնկացիցի, աշա-  
կերտ հոյգէից հարն և սուրբ վաբդապետին վարդանաշ, սպա-  
սաւոր սուրբ դրոց բանի ի թվին/ 219 պատահեաց գալ ի կող-  
մանս աստուածադատ թաղատութեանս աշխարհիս Վրաց, ի հրո-  
շակաւոր և ի մեծ մաշքաբաղարս ի Տփլիս, Փայտակարան կո-  
չեցեալ, ի գիրս պատմողաց, և հանգիպեցաւ մեզ խառնել բանս  
բարոյութեան ի դունն եկեղեցոյն մեծապատիւ և խոհեմամիտ և  
մեծ իշխանին Հայրոց պարոն Քարեմատինին, զոր շինեալ էր աս-  
տուածասէր և բարեհոգի հայրն նորա պարոն Ումեկն: Եւ էր խառնե-  
ցեալ բանն յաղագս երկնային շարժմանն: Վասն որոյ ակորժելի  
եղև դուարթամիտ պատանոյն Վախրաւելայ, որ էր որդի կրթ/սեբ  
հոշակաւոր անուան պարոն Ումեկին և մայրենի ազգաւ՝ թոռն մե-  
ծի իշխանին Զալալին՝ տեառն տաշնա, որդի մաւր բարեխաշտի,  
որ էր Քրիստոսի աւրինաւրն զարդարեալ հոգի, և խնդիր բանիս  
յորդորող զորդի:

2ա Սալ խնդրեաց ի մէջ/նշ յաղագս երկնի և նորին շարժմանն,  
յոր հարկեալ յորդգրեաց զտկարութիւն մեր՝ մեծազգի եպիսկոպո-  
սի տէր Յոհան ազնուական զարմից և բարեստոհմիկ հարց ծնունդ,  
որ և շարժեալ ի սիրոյ և ի յուսոյ խնդրողաց, և ակն տռեալ ի  
պատուոյ շնորհնշուք տեառն և գերապատիւ եկեղեցոյ գլխոյն ի  
նրբաշաւիդ և ի կորովամիտ բանից սուրբ հարցն և վարժապետց

մերոց և իմաստախոհ արանց, պարզեալ գրեցի համառաւութեանի և աշխարհական խաւիւք՝ վասն դիւրաւ հասկանալի լինել ընթերցողացդ:

Արդ՝ որ գրէք յաղագս աւգտի զսակաւ աշխատութիւն մեր, գրեսցիք և զայս նախադրութիւնս և զբան յիշատակի անուան խնդրոց և գրող սորին, գրեալ լիջիք և դուք ի գիրն կենաց: Եւ որ ծուլանայ և թողու զսա, ոչ լիցի առանց պատժոց, իւր յոլով աշխատութեանց դիւր սակաւն գին տալ ոչ կամեցաւ գայլոց:

Յաղագս երկնի, քե քանի՞ են և ո՞րպէս իմաստութեամբ  
յանգոյից են յԱստուծոյ:

32 //Արդ՝ առաջին երկին հրեղէնն է, զոր ասացաւ, զոր եթեր անուանեն: Իսկ որ ի հետ սորա՝ երկրորդ երկինք, հաստատութիւն է, զոր արար Աստուած յերկրորդ աւուր արարչութեանն: Զի ասաց Աստուած. «Եկեղեցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ և եղիցի մեկնեալ ի մէջ ջրոցդ»: Եւ եղև այնպէս: Զի ջուրն զերեսս երկրի ծածկեալ ունէր: Հրամանաւն Աստուծոյ ի մէջ ջրոյն եմուտ աւղն, որ է հողմ և վերացոյց զկէս ջրոյն ի վեր կամարածե որպէս խորան: Եւ այսպէս՝ աւղն և ջուրն՝ որ ի վերայ աւղոյն՝ կոչեցեաւ հաստատութիւն: Եւ է այս երկրորդ երկինք ի յաւղոյ և ի ջրոյ՝ ի ներքո առաջին և ի վերին երկնիցն, որ է հրեղէն:

Եւ է երրորդ երկին աւղեղէն, յորում են արեգակն և լուսին և անտեղք: Եւ երկինք կոչեն գիրք, ըստ այնմ արար զլուսաւորս և եդ զնոսա ի հաստատութեանդ:

33 Եւ այս Գ երկինքս հե/ո/ւի են ի միմիանց: Զի որպէս աւղն՝ յորում, լուսաւորքն հեռի է յերկրէս. նոյնպէս ջրեղէն կամարն հեռի է յաւղոյդ, այսպէս և հրեղէն երկինն հեռի է ի ջրոյն:

Եւ այս երեք երկինս անդադար շուրջ Գան զերկրաւ: Հրեղէն երկնեցն շուրջ գալն անտեսանելի է աչաց և անթուելի համարոց և անշափելի, իսկ այս երկինս, որ աչաց երկի շուրջ գալն և լուսաւորքդ տեսանելի, աստի իմացաք զվերինն: Եւ թէ անհաւատալի թուի քեզ, թէ ո՞րպէս ջուր դադարի ի վերայ աւղոյն և ի ջուրջ գալն ո՞րպէս ի վայր ոչ հոսի, քեզ վկայ որ հաւատաս: Զամպն տես, զի ամպն ի ծովէ և ի գետոց առնու զջուրն և վերանայ և ածէ անձրև ի վերայ երկրի: Եւ թէպէտ ջրովն ծանրացեալ է, այլ առնու և վերանա զջուրն, և հողմք ի ներքոյ անցեալ առեալ գնան ընդ երկինս, և ոչ թափի ջուրն ի վայր, քիչ կայ ամենազաւր հրա/մանաւն ծրարեալ յաւղս և ըստ ակնարկութեանն Աստուծոյ

անձրեւէ ուր և կամիւ Նոյնպէս և ջրեղէն երկնքն, որ է ի ներքոյ  
Հրեղինին և ի վերոյ աւդոյս, շարշ գայ անգագար որպէս զնոսայ:

Յաղագս երկնի՝ բէ ո՞րպէս շարշ գալովն երկնի՝ երկիրս  
նաստատուն կայ, և երկինքն միշտ շարժի:

Ասեն իմաստունքն վասն երկրի՝ թէ որպէս սկսեալ է, և  
այլ թէ՛ բոլոր որպէս գտնող է: Եւ երկինքն պատեալ է զերկիրս, և  
երկիրս ի մէջ կա յերկնիցն: Հողմն, որ ի ներքոյ երկրի կայ, և  
ի վեր փչէ և ոչ թողու որ ի վայր զնա յերկիրս, և իւր բնական  
ծանրութիւնն ոչ թողու որ ի վեր շարժի և այսպէս հաստատուն  
կայ միջոցին:

Եւ են ի մէջ երկրի Հրոյ երակք և ջրոյ երկար, և կայ քամոյ  
երակք: Եւ զի երկիրս ծանր է, ի վար հակէ և հողմն ի վեր մղէ,  
չուրն որ ի միջոցին է, մղի ընդ հողն և յիւրուր կապչի, և լինի լալա  
յատակ, և խստանա և պնդի երկրային մարմինս: Ի տեղի, ուր  
Հրոյն երակքն կայ, չուրն տար գայ ի վեր, և ուր քամուն երակքն  
կայ, թէ հնչէ քամին ի ներքոյ երկրի, տեղիք որ նաւոր լինի, յերեսք  
եղանէ և շարժ լինի հրամանան Աստուծոյ յորժամ կամենայ խրա-  
տել զմեզ:

Եւ այսպէս երկինքս իւր արագ շրջագալութեամբ ոչ թողու  
զերկինս որ ի ներքին կիսագունդ իջանէ, և զի երկիրս ծանր է:

Վասն է գաւեռաց, որ ասեն է պարունակի, և կոչի է երկինք:

Այս է երկինքս մոլորականացն տեղի են: Եւ մոլորականք  
այս են. Զոհալ, Մուշթարի, Մառիս, Արեգակ, Զոհրա, Ատարիս,  
Լուսին: Յորժամ յերկիրէս ի վեր, իմանաս, առաջին գաւտին Լու-  
սինն է, որ կոչի հոռոմերէն Սիլինոս, տաճկերէն՝ Ղամար և հայե-  
րէն Լուսին: Եւ է մաւա յերկիրս, քան զամենայն աստեղս: Եւ իւր զնա-  
ցիցն աստիճանքն նորր է և կարճ, զի իւր կամարն փոքր է, քան  
զամենայն, վասն ցածութեան: Կենալ յամեն աստիճան Բ ժամ  
պակաս, Դ մասն ի կենդանակերպսն, Բ ար և կէս: Եւ քսան և չինք  
ար և կէսն վճարէ զամենայն երկինքն, և այլ նոր ծնունդ առնու:  
Եւ լինի ի նորէ ի նոր Ի՞նչ ատուր ու կէս:

Երկրորդ գաւտի, որ վերե լուսնին է՝ Փայլածուն է, հոռոմն  
Նումիս ասէ, տաճիկն՝ Ատարիս: Եւ վճարէ իւր զերկինքն ի Ժ  
ամիսն:

Երրորդ գաւտին՝ Լուսաբերն է, հոռոմն Ափրոդիտէս ասէ, տա-  
ճիկն՝ Զոհրա, ի Ժ ամիսն վճարէ և սա:

Զորրորդ գաւտին՝ Արեգակն է, հոռոմն Իլիոս ասէ, տաճիկն՝  
Շամս:

Վերև արեգականն՝ Հրատն է, հոռ/ոմն՝ Արէս, տաճիկն՝ Մա-  
ռիս:

Վերև Հրատին՝ Լուսնթագն է, հոռ/ոմն՝ Զևս, տաճիկն՝ Մուշ-  
թարի:

Վերև Լուսնթագին՝ Երևակն է, հոռոմն՝ Կոռնոմ ասէ, տա-  
ճիկն՝ Զոհալ:

### Յաղագս արդոյն, որ կոչի հոլմ

Աստուծոյ սքանչելի արուեստն զմի բնութիւն իրաց ի բազումս  
բաժանէ, և բազումք անուամբ կոչին: Զի ի Դ տարրեացն մինն  
քամին է, որ աւդ ասեմք: Եւ այս մինս ցեղացեղ // անուանք ունի,  
զի ասի հոլմ, քամի և աւդ: Եւ աստի լինին ամբն, ձիւնն, եղեամն,  
աղեղն, որ իջանէ, որոտն շանթիքն, ցոլմունքն, փայլակն և այլ  
բազում իրս:

### Թէ ուստի՞ լինի այս աւղն և ո՞րպէս:

Երկու գոլորշիք, որ ելանէն յերկրէս ի վեր, որ ասեն բուխար,  
ի վեր բարձրանան, նաւար և անտես աչաց: Մինն գէճ է և միւսն  
չոր: Այն, որ գէճն է՝ յաղբերաց, ի գետոց, ի ծովէ ելանէ: Եւ այն,  
որ ցամաքն է, ի չոր և ի ցամաք գոլորշեացն լինի, և ի հողմոցն, և  
որպէս զծուխ վերանա: Այն որ գէջն՝ անտի լինի բալն, սառնա-  
մանիք, ամպք, անձրևք, ձիւն, կարկուտք: Այն որ չոր շոգին է,  
որ է՝ Բուխարն յաշխարհէս, անտի լինի ազգի հողմք, որոտմունք,  
փայլատակմունք, կայծակն, հրձպութիւն և այլ ինչ որ սոցին  
նման է:

### Զի՞նչ է բալն:

Բալն ի զարութենէ ամպոցն է, զի յորժամ աւղն թանձրանա  
ի բալ դառնա: Եւ է բալլն քան զաւղն թանձր և քան զամպն՝  
նաւար, և ունի սակաւ մի գիճութիւն, որ խոնաւեցուցանէ զերեսս  
երկրի, զոր կոչիմք և մառախուղ:

## Զինչ է որոտն և կայծակն:

Յորժամ հողմն, որ է քամին, բռնութեամբ հնչէ և ի մէջ ամբողջն մտանէ, յայնժամ թանձր ամպն պատառէ և լինի ճալթմունք ի պատառմանէն, զոր և որոտ անուանեմք: Եւ ի հողմոյն յիրար շփելոյն և ի ճնշելոյն հոր փայլէ, զայն փայլատակմունք ասեն և կայծակտար: Զի հոր յամենայն յարարածս խառնէ և աւելի՝ յաւղդ: Եւ երբ հատանի հորն յամպոյն, թէ թանձր ելանէ, յերկիր տնկանի և վնաս առնէ, և թէ նաւոր ելանէ՝ ոչ թողուն աւգբքն յերկիր, այլ բնդ աւղն ցնդի անվնաս:

## Ձմեռն, որ որոտելոյ շինի:

Վասն զի ձմեռն ամբն նաւարցեր է, զի ձմեռն հիւսիսային հողմն հնչէ և այն նաւարացնէ դամպն, և ստերջ դառնա ամպն, զի հարաւային աւղն է, որ թանձրացնէ դամպն:

Յա

## // Զինչ պետք է որոտն:

Վասն զի ի թանձրութենէ ամպոյն շկարէ անձրեւն յամպոյն ի վայր հոսել, իսկ ի գոռալն և ի պատառիլն, թուանայ հաւասար և արկանէ զանձրեւն: Եւ զոր արկնակ մայր դմանուկն յորժամ ծնանի, մեծածայն գոռա, և զի հողին շինքն քաշէ, որ զշնչական երակքն նեղէ և դմանուկն ի վայր բերէ և ծնանի: Նոյնպէս և երկիրս սառուցեալ և պաղեալ ի ձմեռնային ժամանակն և պնդեալ զբնութիւն հողոյն, վասն այնորիկ պիտոյ է ձայն որոտանալոյն զի թուլացն բնութիւն հողոյն, և բոյսք և սերմունք յերկրէ ի վեր ծնանիցին և ծառք, ծաղիկս փթթեսցեն՝ ամենայն ի ձմեռնային կապահացն արձակին:

## Վասն ձիւնի և անձրեւի:

Յորժամ արեգակն ի հարաւային կողմն ցածանա ի խոնարի, յայնժամ հիւսիսային հողմն զարանա և զաւղն յիրուր խառնէ և թանձրացնէ, որ ամպ լինի, և կտրատի և ի // վայր հոսի սպիտակ և փրփրատեսակ: Զի ցուրտ քամին զնաւարութիւն ջրոյն ալսպէս առնէ և երբ թանձր մեծ և մեծ թափի ի վայր, որ տաղատարափ ասեն: Եւ որ՝ նաւոր է և մանր, այն ձիւն կոչի: Իսկ ի զարնան ժամանակի, և յամառն և յաշունն աւղն ժողովէ զջուրն ի ծովէ և ի

Յբ

գիտոց և առեալ յերկրէ ի վեր քարծրանա և ի քաջ ամբո թաւ-  
թափմանէ լինի անձրև, զի ի գարնան ժամանակ աւդն պարար-  
տանա ի գիշութենէ ջրոյն և յարեգակնն ջերմութենէն թանձրա-  
նա: Զի հողմ ի ներքոյ անցեալ առեալ տանի և հողմոյն գոռալովն  
աւդն պատառի, թուլանա և զանձրեն ի վայր հոսի:

### Վասն կարկառի

Կարկուտն լինի ի սաստիկ և ի ցուրտ քամոյն, որ շնչէ ի հիւ-  
սիսոյ կողմանէ, ի շփմանէ հողմոյն ուղղելով բոլորէ և պնդէ  
7ա զնաւարութիւն ջրոյն և շաշելով ի սաստիկ շփմանէ թափէ՝ ի է որ  
ուժով և խիստ, և է որ նուազ: Եւ այս լինի ի խրատ և ի պատուհառ  
մեղուցեկոց:

### Ուստի իցէ ցաւը և եղեամն:

Հուսաւորքդ աւդով զշուրն ծծեն և ի վեր քարշեն, երբ արեգակն  
ծագէ, թուլացնէ զաւդն, և այն, զոր մնացեալ է յաւդն, ի գիտեինն  
իջանէ և ցաւ կոշի այս: Իսկ ի ցուրտ ժամ թերայսառուց լինի և  
կռշի եղևմն:

### Զիւշ է ալեղն:

Պատճառ աղեղին իջանելոյն՝ գիշութիւն աւդոյն և ջերմութիւն  
արեգականն է: Զի ի փարատել անձրևին, գիշութիւնն, որ ի  
յաւդն է մնացեալ, և արեգականն ջերմութիւն յիրուր խառնին աւ-  
դոյն գիշութիւն ի ներքեւ, և արեգական նշուքն ի վերէ միաբա-  
նին և նաւասութիւն աւդոյն գոյնագոյն և երբն-երբն երկի կա-  
մարածե որպէս զերկնաին զգունդն, զի գոյն երկրի սև, կանան-  
շագեղ բուսոց և ջրոց, յիրուր խառնին և այնպէս երկին: Թէ մի է  
8ա զաւտին, որ երկի, նշան դադրելո ի անձրևին է՝ պարզելու: Եւ թէ  
երկու երկի՝ յայլ յայլ դէհ, չլորդ և զսաստիկ անձրև նշանակէ:  
Եւ ի սկզբանէ աշխարհի էր սա, զի հետեանք է տարերցս, որպէս  
ծուխն՝ հետ երթանք է հրոյ, որ քամի ի գէջ խոնաւութիւնն ի  
հրախիւն կերակրոյն և ապա յատակի բոց հրոյն, վասն այսորիկ  
զսայ ետ Աստուած նշանս ի յորդութեան անձրևացն դադարման:

Թէ զի՞նչ է հուրն որ ի յերկնից անկանի և քանի՞ ազգ են:

Է ազգ մի, որ շանթիք ասեն, որ ի հրեղէն երկնիցն կտրատի  
և ի վայր հոսի և չղազարէ ուրեք: Այլ յորժամ անկանի, ծակէ

դիմանձրութիւն երկրի և զոր ինչ գտանէ, աչրէ և ընդ թափն ի վայր անցանէ ի ներքին կիսագունդն իւր ազգակիցն, ուստի անկեալ է:

Եւ է ազգ մի, որ յորժամ ի սաստիկ ամսոյն Հոգմով ծովն խառնակի, որ ատակ ծովոյն և աւաղն յերեսն շրջի և աւղն առնու զաւաղախառն ջուրն և ի վեր վերացնէ ջրովն, և տանի բալլրձր և ի հրախառն և ի տաք ալթն շփէ և վառէ որպէս զհուր և ի վայր թափէ: Եւ յորժամ յերկրի հասանէ, յոր ինչ դիպի, աչրէ և անցանի և մնայ որպէս երկաթի փափշա:

Եւ է ազգ մի, որ ասնն թէ աստղ թռաւ: Եւ աստղն ոչ թռչի, այլ յորժամ ընդ շրջակա պարունական երկնից շնչէ և սաստիկ արագապէս անցանէ, ընդ որ դնա, զաւղն, որ տաք է և հրախառն, որպէս զծոր պատառէ, և երկայնութեամբ երեւի և թուի թէ աստղ թռաւ:

Եւ է ազգ մի, որ պատառեալ ազոյղ ի սաստիկ հոգմոյն վերին լոյսն հրակերպ երեւի, աւղն, որ պատառեցաւ յիրուր գալն և ի կցիլն ծածկի դարձեալ և մենք զայսոսիկ ասեմք թէ աստղ թռաւ: Նոյնպէս և այն կայծակ տալ ասի: Զի յորժամ ամբն պատառի և գոռալուն որոտ լինի և յիրուր շի ելոյն կայծակն լինի: Զի որպէս հրահան երկաթն, որ զկայծբարն բախէ, ելլին հուր: Նոյնպէս և երբ հոգմն զամբն պատառէ, պատառեալն զորոտն առնէ և հոգմն յամբոյն զհուրն հանէ և ի տեղի, ուր անգանի, վնասէ: Յառաջ որոտն է և ապա կայծակն, բայց մեր յառաջ զհրոյն լոյսն տեսանեմք: Զի աչքն այլ սուր է, քան զականջն, և ական զհեռուն տեսանէ և ականջն զմատն լսէ, վասն այնորիկ զլոյսն ի հեռուստ տեսանեմք, և յորժամ ձայնն ի վայր հասանի մատ ի մեղ և ականջն լսէ: Եւ այս՝ յորժամ ի պարզ ժամն լինի, թոուցած աստղ ախլեմք:

Զինչ է բակ լուսին:

Թանձր աւղդ, որ ունի բոլոր զճառագայթա լուսնին և նշուքն ի դուրս ելեալ ընդ թանձր աւղն բոլորակ լինի, և է նշանակ ամբոց:

Յաղագս գաւեան եղանակի և ի կենդանակերպսն:

Խոյ, Յուլ, Եկատր՝ զարնան յեղանակ լինի: Արմատք // բոյսք արձակեն, մարգբ դուարճանան, ծաղիկբ պայծառանան, և անասունք և թռչունք ի ծնունդս գան: Եւ այս Գ կենդանակերպովս գնալով ընդ հիւսիս, և ի վճարել զարնան յեղանակին, մտանէ արեգակն ի Խեցեղատինն իրէ սարատանն և սկիզբն լինի ամռան եղանակին: Եւ լինի յայնժամ արն ժն ժամ և գիշերն՝ Թ: Եւ յա-

մելու՛ ի հիւսիսակողմն Գ ամիս կենդանակերպովն, որ է ի հեց-  
գետինն, Առիժ, Կոյս առնէ զեղանակ ամարան, յամէն ար մասն  
մի ցածանալով, և զի հիւսիսակողմն է, յայնժամ արեգակն զցուր-  
տըն հալածէ ի ներքոյ երկրի, և վաւս որ ի վերայ երկրի, շնու-  
ցանէ ն զխոնաւ գիշութիւնն, որ ի ներքոյ երկրի է, ծրծէ և զսեր-  
մանիս և զստուղս պարարեալ պնդէ և հասունացնէ: Եւ ի վճարել  
զամարան կենդանակերպսն, յմտանէ ի Կշիւն, և սկսանի այնու-  
հետեւ աշունն և լինի քաղցրախոն և միջակ աւոյն: Եւ դարձեալ հա-  
ւասարին տիւն և գիշերն, և ապա փոքր փոքր ամենայն աւուր  
մասն մի խոնարհի և իջանէ ընդ հարաւ: Եւ փոքրանա աւոյն և ցըր-  
տանա աւոյն: Եւ գալ մտանէ ի յեղանակս ձմեռան: Եւ ի հետանալ  
արեգականն ընդ հարաւ, ի ցածանալն, գիշերք մեծանան և հիւսի-  
սային սառնամանիքն լինի ձիւնաբեր բերմունք: Եւ այս՝ վասն  
այնորիկ, լինի, զի արեգականն ջերմութիւնն ի հարաւէ ի ցած  
կոյս հիւսիսային հողմն զարացեալ՝ հալածէ զհարաւային ջեր-  
մութիւն ի ներքո երկրի, արգելեալ փակէ և սառուցյալ պնդէ  
զերեսս երկրի, վասն այնորիկ բիւր ակունքն ձմեռն տաք և ջերմն  
բղխէ, զի արեգականն ջերմութիւնն ի հարաւային հոնջն զարու-  
թիւնն ի ներքոյ երկրի մտեալ և շնուցեալ զընութիւն ջրոց: յՈր-  
պէս և յամարնային եղանակն, որ արեգակն ի հիւսիս բարձրանա,  
զցուրտն հալածէ և ի ներքս երկրի փակէ: Վասն այնորիկ աղբիւրք  
սառն և ցուրտ բղխեն: Յորժամ այս Գ կենդանակերպովն կատա-  
րէ ձմեռն, որ է Այծեղջիւրն, Զրհոսն, Զուկն, մասն մասն աճէ և  
բարձրանա և հասանէ ի մէջ երկնիցն, և ետյն որ և դարուն լինի:  
Եւ այսպէս ծանիր զշրջանն երկնից և զգնացալուսավորացդ, և փո-  
փոխումն յեղանակացդ: Եւ Աստուծոյ փառք այժմ և յամէն:

Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2174, Բերթ 1ա—10ա

ՅԱՌԱՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԶՆՂԻՆԱԿԻՆ

Յաղագս երկնային շարժմանն նուստ Յօնաննիսի նշանկայեցոյ  
շարադրեալ յիմաստնոց բանից, ի խնդրոյ բարեպաշտ և երկիւղալարդ  
պատանոյն պարոն Վաղբանկայ:

Ամենայն ոք՝ որ զբան որ է ծնունդ անմարմին մտաց, գրով ի քար-  
տիսի կամիցի դրոշմել պարտի և զնորին սլառճառն՝ յանդիման կա-  
ցուցանել որպէս զի վերջին ժամանակին ծըննդոց մարդկան՝ յօժա-  
րութիւն և սէր խնդրողի բանին, և աշխատանք տուողի խնդրոյն, մի  
ծածկեսցի ի բանասիրաց և յաշխատասէր անձանց: Զի կարօտքն բա-

նի՝ իրրե ղերկիր ծարաւում զցօղ քաղցրութեան երկնի խնդրեցին. և ապա սպասաւորքն բանի՝ իրրե զամպ ընդունակ ցօղոյ՝ զառեալն յանսահման ծովէ իմաստից և ի զեւոոց հասմանէ, յաղագս ծուլութեան մի արդիւցին:

Ըստ որում և ես, նուաստ Յօհաննէս Եղբնկայեցի՝ աշակերտ հոգիւից հօրն և սուրբ վարդապետին Վարդանայ, սպասաւոր սուրբ գրոց բանի ի Թվին ԶԼԳ, պատահեաց զալ ի կողմանս աստուածապահ Թաղաւորութեանս աշխարհիս Վրաց, ի հռչակաւոր և մեծ մայրաքաղաքն ի Տփլիս, Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց: Եւ հանդիպեցաւ խօսել մեզ բանս քարոզութեան ի դուռն եկեղեցւոյն՝ մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան Հայոց պարոն Քարեմատինին, զոր շինեալ էր աստուածատէր և բարի հոգի հայր նորա պարոն Ումէկն:

Եւ էր խօսեցեալ բանն՝ յաղագս երկնային շարժմանն՝ Վասն որոյ ախորժկի եղև դուարթամիտ պատանուոյն Վաղթանկայ, որ էր որդի կրտսեր՝ հռչակաւոր անուան պարոն Ումէկայ և մայրենի ազգաւ Թոնն մեծի իշխանին Զաւալայ՝ առանն ետչենոյ, որդի մօր բարեպաշտի, որ էր Քրիստոսի օրինօքն զարդարեալ հոգի, և ի խնդիր յորդորող զորդի:

Սա խնդրեաց ի մէջ յաղագս երկնի և նորին շարժմանն: Զոր հարկեալ յորդորեաց զտկարութիւնս մեր, և մեծագոյ կախկոպութն Տէր Յօհանն, յաղնուական զարմից և բարեխոհմիկ հարց ծնունդ: Որ և շարժեալ ի սիրոյ և ի յուսոյ խնդրողաց, և ակն առել ի պատուոյ շնորհաշուք Տեառն՝ և ի զերապատիւ եկեղեցւոյ գլխոյն, ի նրբաշաւիղ և ի կորովամիտ բանից սուրբ հարցն վարդապետաց մերոց, և լիմաստախոհ արանց պարզեալ գրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք Վասն զիրաւ հասկանալի լինելոյ ընթերցողաց:

Արդ՝ որ գրէք յաղագս օգտի դսակաւ աշխատութիւնս մեր. գրեսցիք և զայս նախագրութիւնս, և զբան յիշատակի անուան խնդրողաց՝ և զորդի սորին. գրեալ լիջիք և դուք ի գիրն կենաց: Եւ որ ծուլանայ և թողու զսա, ոչ լինի առանց պատժոց, իբր յուով աշխատութեանց՝ զիր սակաւն գին տալ ոչ կամեցօղ լեալ:

Յաղագս երկնից քն քանի՞ են երկինք, և որպէս իմաստութեամբ յանգոյից եղև հրամանաւն աստուծոյ: Ա.

Արարիչն Աստուած՝ իմաստութեամբ և զօրութեամբ արար զաշխարհ՝ ամենայն ղերեւելի: Եւ երեկ զօրութիւն նորա՝ զի յոչընչէ արար զամենայն արարածս և տեսանի իմաստութիւնն՝ զի զեղեցիկ արուեստիւ՝ յօրինեաց ղերկինս և ղերկիր:

Զորս նիւթ արար աստուած ի պէտս շինութեան աշխարհի: Հուր՝ և

հողմ. Զուր՝ և հող: Սոքա՝ ըսկզբունք և արմատք են ամենայն գոյիցս և են հակառակ միմեանց: Իսկ այլ արարածքս՝ ծայրք և ծնունդք ի սոցանէ յառաջ եկեալ և խառնեալ ընդ միմեանս, յորմէ ստեղծան եղականքս, բոյսք և կենդանիք: Եւ պիտոյ էր այս շորք տարերքս, զի առանց հողոյ ոչ լինէր թանձր մարմին, և ոչ առանց ջրոյ՝ շաղկուն և միտրութիւն, և առանց օդոյ՝ որ է հողմն, շարժումն ոչ լինէր, և ոչ առանց հրոյ՝ գոյն և երևումն: Վասն որոյ՝ ստեղծ վամենայն զգալի և նիւթական հղեալքս ի հողոյ, և դալարացոյց ջրովն. ետ շարժումն ի յօդոյն, և երևումն և գոյն ի հրոյն: Եւ այս է զոր ասէ մեծ մարգարէն Սովսէս ի սկզբանէ արար աստուած զերկինս և զերկիր: Զի երկինքն՝ երկու իրք է, հուր՝ և օդ: Եւ երկիրս՝ երկու իրք է. հող և ջուր:

Եւ յորժամ ստեղծ վայս շորս տարերքս, արուեստ իմաստութեանն աստուծոյ երեւցաւ ի ստեղծութեան իւր: Զի հողն ծանր էր՝ զներքի վայրն էաւ, և ջուրն ի վերայ հողոյն զետեղեցաւ, և օդն որ թեթիւ էր քան ըզջուրն, ի վերայ ջրոյն կայացաւ: Եւ հուրն որ առաւել թեթիւ էր քան օդն, ի վերոյ քան զնա սահմանեցաւ. վասն զի՝ յօդն գիշութիւն ջրոյ կայ: Եւ քեզ օրինակ բանիս, թէ առնուա աւաղ և ջուր և ձէթ, և արկանես յաման մի խեցեղէն, աւազն՝ յատակն նստի, ջուրն ի վերոյ գայ, և ձէթն ի վերոյ քան զջուրն, և խեցեղէն ամանն՝ վամենայն ի ներքոյ իւր ունի: Ըստ այսմ նմանութեանս՝ և շորք տարերքս դասեցան: Հուրն՝ զի թեթիւ է բնութեամբ, և շարժումն ի վեր ունի, զնդաձև շրջապատեաց վայլ երեք տարերքն: Եւ զի հողմն ի ներքոյ անցեալ՝ փշիաց փեռեկեաց ի վեց կողմն. ի վեր և ի վայր և ի շորս կողմ երկրի զհետ հրեղէն երկնի ձեացաւ. և հողմն՝ կարգեցաւ ի ծոց նորա որպէս յաման արկեալ: Եւ երկիրս՝ որ է հողն և ջուրն, ի միջոցի երկնից կառուցաւ:

Ահա այս է հրեղէն երկինքն՝ զոր արար աստուած յառաջին աւուր արարչութեանն, որ բաժանեցաւ յերկու կիսագունդ: Զի որպէս ի վերոյ երկրի կամարած է և բոլոր, նոյնպէս է և ի ներքոյ երկրի: Քանզի հեռի է յերկրէս ի վեց կողմանէ: Ի վերոյ երկրի՝ որպէս տեսանես զմիջոցս վայս, որ ի վեր է երկինքն յերկրէս: Նոյնպէս և այս շափովս՝ ի ներքոյ երկրի, ներքին փորումն և ծոցն: Այսպէս ընդ արեւելս և ընդ արեւմուտս, և հիւսիս և ի հարաւ, հեռի է երկինք յերկրէ:

Յաղագս երկրորդ երկնիցն, եւ շրջագայութեան նորին քէ ո՞րպէս է\*: Բ

Արդ՝ առաջին երկին՝ հրեղէնն է, որ ասացաւ, զոր էթեր անուանեն: Իսկ որ ի յետ նորա երկրորդ երկինք հաստատութիւնն է, զոր արար աստուած յերկրորդ աւուր արարչութեանն: Զի ասաց աստուած եղիցի

\* Վերնագիրը փոփոխված է:

Հաստատութիւն ի մէջ ջրոցդ, և հզիցի մեկնիլ ի մէջ ջրոցդ և ջուրց, և հզի աշնպէս Զի ջուրն՝ դերեսս երկրի ծածկեալ ունէր: Հրամանաւն աստուծոյ ի մէջ ջրոցն հմուտ օդն, որ է հողմն, և վերացոյց զկէս ջրոցն ի վեր՝ համարաձե սրպէս խորան, և աշնպէս օդն և ջուրն որ ի վերայ օդոցն, կոչեցաւ Հաստատութիւն: Եւ է աշն երկրորդ երկինք՝ ի յօդոյ և ի ջրոյ: Ի ներքոյ առաջին և վերին երկինքն, որ է հրեղէն:

Եւ է երրորդ երկին օդեղէն, յորում են արեգակն և լուսին և աստեղքն և երկինք կոչեն զիրր: Ըստ անշմ, արար զլուսաւորս և հզ գնոսս ի Հաստատութեանդ:

Եւ աշն երեք երկինքս հետի են ի միմիեանց, զի սրպէս օդն՝ յորում լուսաւորեն հետի են յերկրէս, նոյնպէս ջրեղէն կամարն հետի է յօդոյն: Աշնպէս և հրեղէն երկինն, հետի է ջրոցն:

Եւ աշն երեք երկինքս անդադար շուրջ դան զերկրաւ: Հրեղէն երկնից շուրջ դան՝ անտեսանելի է աշաց. և անթուելի համարոց, և անշափելի Իսկ աշն երկինս՝ որ աշաց երեւի շուրջ դան և լուսաւորեզ տեսանի աստի իմացար զվերինն: Եւ թէ անհաւատալի թուի բնդ, թէ ո՞րպէս ջուրն դադարի ի վերոյ օդոցն և ի շուրջ դան ո՞րպէս ի վայր ոչ հոսի: Քնդ օրինակ որ հաւատաս՝ դամպն տես. զի ամպն՝ ի ծովէ և ի գետոց անու դջուն, և վերանայ. և ածէ անձրե ի վերայ երկրի. և թէպէս ջրովն ծանրացեալ է ալլ անու և վերանայ դջուն. և հողմք ի ներքոյ անցեալ՝ առեալ գնան ընդ երկինս. և ոչ թափի ի վայր ջուրն, ալլ կայ ամենազօր հրամանաւն աստուծոյ ծրարեալ յօդս: Եւ բոս ակնարկութեանն աստուծոյ, անձրեկ ուր և կամի: Նոյնպէս և ջրեղէն երկինքն, որ է ի ներքոյ հրեղինին և ի վերոյ օդոյս, շուրջ դան անդադար սրպէս զնոսա:

Յազագս երկրի, քէ ո՞րպէս շուրջ գալն երկնի՝ երկիրս հաստատուն կայ, և երկինք միշտ շարժի: Գ

Ասեն իմաստունքն վասն երկրի, թէ սրպէս զսկուտեղ է. և ալլք՝ թէ բոլոր սրպէս զդունդ է: Եւ երկինքն պատեալ է զերկիրս, և երկիրս ի մէջ կայ. Երկնից հողմն՝ որ ի ներքոյ երկրի կայ, ի վեր փշէ և ոչ թողու որ ի վայր գնայ երկիրս. և իւր բնական ծանրութիւնն՝ ոչ թողու որ ի վեր շարժի և աշնպէս՝ հաստատուն կայ ի միջոցին:

Եւ են ի մէջ երկրի հրոյ երակք, և է ջրոյ երակք, և կայ քամոյ երակք: Եւ զի երկիրս ծանր է և ի վայր հակէ, և հողմն ի վեր մղէ, ջուրն որ ի միջոցին է, մղի ընդ հողն և յիւրար կափշի. և լինի սալալատակ, և խտանայ և պնդի երկրային մարմինս: Ի տեղի, ուր հրոյն երակքն կան, ջուրն տաք գայ ի վեր, և ուր քամոյն երակն կայ՝ թէ հնչէ քամին ի ներ-

քոյ երկրի, տեղիք որ նօսր լինի՝ յերեսք ելանէ, և շարժ լինի հրամանան աստուծոյ, յորժամ կամենայ խրատել զմեզ:

Եւ այսպէս՝ երկինքն իւր արագ շրջագայութեամբն, ոչ թողու զերկիրս որ ի ներքին կիսագունդն իջանէ: Եւ զի երկիրս ծանր է, և ջուրք ծովուն ի վերայ երկրի է, նա հողոյն և ջրոյն ծանրութիւնն ոչ թողու որ ի վեր տանի: Եւ հողմն որ ի ներքոյ կայ՝ ոչ թողու ի վայր դնալ:

Եւ թէ օրինակ խնդրես, թէ ո՞րպէս կայ երկիրս ի մէջ երկնից, քեզ օրինակ ձու հաւուն, բոլոր դեղնուցն որ ի մէջն կայ՝ է նման երկրիս, և սպիտակուցն՝ օդոյն նման. և միեզն բարակ, որ յետ սպիտակուցին է՝ այն ջրեղէն կամարն է, և խեճեպն՝ հրեղէն երկինն: Է և այլ օրինակ: Ի կրետէս կղզին անդամանդ քարեայ տաճար է շինած, և պողպատ երկաթէ պատկեր է արարած և ի մէջն թողած. ծանրութիւն երկաթին ի վայր հակէ, և զօրութիւն անդամանդ քարին ի վեր քարշէ, և կայ այսպէս հաստատեալ ի միջոցին ի կախ: Նոյնպէս և երկիրս ի մէջ երկու կիսագնդին երկնից կայ հաստատեալ բանիւ հրամանին աստուծոյ, որ ասէ. ևս հաստատեցի զսիւնս նորա:

#### Վասն ծովու և ամենայն ջուրց: Դ

Երկրորդ աւուր արարչութեանն հրամայեաց աստուած ասելով. ժողովեացին ջուրքդ որ ի ներքոյ երկնից ի ժողով մի. և երեսացի ցամաքն. և եղև այնպէս և զժողով ջուրսն կոչեաց ծովս: Վասն որոյ՝ ասին իմաստունքն թէ ի ներքոյ երկրի. և ի մէջն. և շուրջ զեղեքօքն ջուրք են յամենայն կողմանց: Եւ զի ի ներքոյ երկրի ջուր է. վկայէ սաղմոսն. նա ինքն ի վերայ ծովու հիմունս արկ երկրի: Եւ ի վերայ երկրիս են ջուրք ծովուն. զոր անդնդական ծով ասէ: Եւ շուրջ երկրիս ջուր է, զոր ովկիանոս ծով անուանեն, և յայս ծովս՝ որ շուրջ զերկրաւս է, ոչ նաւ ելանէ ի վերայ, և ոչ կենդանի կարէ բնակիլ ի նմա. զի սաստիկ սուր է, և արագապէս խառնմամբ հողմոյն՝ շուրջ դայ զերկրաւս: Իսկ յայս ծովս որ ի վերայ երկրիս է, ելանեն նաւք, և բնակին կենդանիք. զի կան ի մէջն լերինք և բլուրք:

Եւ քէ՝ յի՞նչ պէտք են այս ամենայն ջուրս գտար աստուած: Ե

Այս է պատճառն՝ զի յամենայն ինչ խառն է հուրն վասն պիտոյից: Զի տունկք և պտղաբերք՝ ջերմութեամբ հրոյն հասանին: Եւ այս հուրս զոր մարդիք ունին ի պէտս, յայտնի է: Այլ և ի հարաւոյ կոյսն կարի ջերմէ, և սաստիկ տաք. ոչ միայն վասն արեգականն տապոյն. այլ՝ բնական հուր խառնեալ է ընդ օդոյն, և իբրև զջուր թանձրացեալ է օդն, զոր հրեղէն ծով անուանեն: Վասն որոյ՝ արարիչն՝ իմաստութեամբ մե-

ծառ, նոյն շափտփն և կշռով արար պշտրն, դի կաշցէ քնդ դէմ հրոյնու եւ վասն աշտորիկ՝ պիտոյ էր վերին ջրեղէն կամարն, դի մի հողմոյն բռնութիւն՝ որ ի ներքոյ նորա կան որպէս զսխանակը. ի վեր փշեացէ՝ և պատառեացէ զերկնային կամարն, և կամ յիւր սահմանեալ տեղոյն ի վեր մղեացէ:

Որպէս և յամպս է տեսանել՝ զոր պատառէ հողմն. որ և զհերձուհին՝ որոտ անտանեմբ: Եւ դի ջրեղէն կամարն ի միջոցի հողմոյն և հրեղէն երկնիցն, արդեւ լինի հողմոյն: Եւ որպէս զհողմն ի վայր արդիւլ թանձրութիւն ջրոյն, նոյնպէս և կայ քնդդէմ հրեղէն երկնից, և լինի նմա կերակուր դի մի կիզեացի աշխարհ ի սաստիկ հրոյն: Զի ի շերմութենէ արեգականն՝ և ի հրեղէն երկնիցն, կիզեալ աշխարհ աշխարհ: Վասն աշտորիկ չորս ծովո՝ արեգականն կերակուր լինի, և այլ լուսատուացոր նոյնպէս և ջրեղէն երկինն հրեղէն երկնից զիմակ լինի: Եւ որպէս լոյս ճրագին, պատարուտան դձլթն ծրծէ, և պակասեցուցանէ. և բժիշկն սրտահովն զարինն ծրծէ և քարշէ, այնպէս լուսատուրդ և հրեղէն երկինն զշտրան: Եւ թէ հատանէր չորս՝ անցանէր աշխարհ, որպէս ի հատանել ձիթին, անցանէ ճրագն:

Իսկ այն շտրն՝ որ շուրջ զհերթօք երկրիս կայ. արտաքոյ բան զինքն՝ ոչ լերինք՝ և ոչ այլ գաղարք կան, որ արդեւ լինի ջրոյն: Այլ՝ սաստիկ հողմն խառնեալ քնդ ջրոյն, և արագապէս ի շուրջ գալով՝ պնդէ զհերթս երկրի. որ կայ՝ ի վերայ ոչլնչի հրամանաւն աստուծոյ:

Զուր ծովուն վասն է՞ր աղի է. կամ զի՞նչ է պատեառն, որ այս ամենայն գեաւս ի ծովն գեան, և ծովն ոչ լինի լցեալ, և յիւր չափէն ոչ ելանէ: Զ

Վասն այն աղի են ջուրք ծովու՝ զի շերմութիւն արեգականն ծծէ և բազէ զբաղցրն՝ և դշտակն և դանուշ ջուրսն, և յօդդ հանէ: Եւ որ մնայ ի տեղին թանձր է և աղի և լեղի և պղտոր: Եւ վասն այն միակշիռ մնան ջուրք ծովու. զի զոր մտանելով գետոցն յաւելու, դայն ծրծէ արեգակն և պակասեցուցանէ: Զոր օրինակ՝ թէ լնուս ջուր ի պղինձս, և եփես հրով, շոգլին որ ելանէ պակասեցուցանէ զջուրն: Եւ թէ ոչ լնու ջուր, ամենեկին պակասի և հատանի: Նոյնպէս իմացիր դու դայս, որ թէ ոչ մտանէին գետք ի ծով, արեգական շերմութիւնն սպառէր և հատուցանէր զջուր ծովուն:

Եւ այլ օրինակ քեզ՝ որ գիտենաս թէ դշտակ և դանոյշ ջուրն ծրծէ շերմութիւն արեգականն. վասն այն ջուր ծովուն աղի և դառն է: Ասեն թէ՝ յորժամ պակասի ջուր նաւորդացն, և ոչ գտանեն ջուր ըմպելու, վասն զի դառն է ջուր ծովուն, առնուն զաղի և զգառն ջուր ծովուն, և լնուն ի կաթսայս և եռուցանեն, և դնեն սպունգս մեծամեծս՝ (այն զոր ամպ

ասեն) խփումս կաթսայիցն և գոլրշին որ ելանէ. ժողովէ սպունգն դհիւթն, և քամելով դայն՝ ժողովեն չուրս քաղցր և ըմպեն: Է և այլ պատճառ, որ ոչ յաւելուն, և ոչ պակասեն ջուրք ծովուն: Զի որ ի վերայ երեսաց երկրի մտանեն գետք ի ծովն և յաւելուն, այն ի ներքոյ երկրի երակօք քամին և ելանեն ի լերինս՝ և ի դաշտս աղբիւրանան. և այս որ մտանելով գետոցն յաւելու, ելանելովն աղբիւրացն պակասի:

Վասն օգեղէն երկնիցդ յորում կան լուսատուրք: Է

Աստուածային գիրն ասէ, թէ արար աստուած զլուսատուրսդ և եդ զնոսա ի հաստատութեանդ երկնից լուսատու լինելու: Այս երկինս որ ի յօդոյ է՝ բաժանի ի յութ, եօթն՝ մոլորակացն կոչի, և ութ՝ մոլորագունդ անուանի, դայն որ մոլորականք են եօթն պարունակ, և եօթն գոտի, և եօթն երկինք անուանեն, և յամէն երկինք է մոլորական մի: Եւ այս են մոլորականքն ի վերուստ ի վայր սկսեալ. Զօհալ, Մուշթարի, Մառիխ, Շէմս. Զօհրէ. Օտարիտ. Ղամէր: Այս տաճիկ լեզուաւ անուանք են: Իսկ ի հայ լեզու. Երեւակ, Լուսնթաղ, Հրատ, Արեգակն, Լուսաբեր, Փայլածու, Լուսին: Ի վերոյ քան Ղամենայն է Զօհալն և ի ներքոյ ամենայնի է Լուսինն:

Եւ այն որ անմոլար գունդն է՝ են երկոտասան կենդանակերպքն և բոլոր երկինքն՝ է երկոտասան բաժին և ամէն կենդանակերպ՝ յերկինս իւր տեղի ունի. վասն որոյ՝ և իմաստունք զերկիրս երկոտասան բաժին են արարեալ, և ի վերայ կենդանակերպիցն և իւրեանց բնութեանն բաժանեալ են: Եւ է աշխարհս՝ մարդակերպ. Խոյն ունի զգլուխ մարդոյն. և դպարսից աշխարհն. Յուլն՝ դպարանոցն, և աշխարհ՝ զբարեւացիք: Եկաւորն՝ ղձեռքն և զուսքն, և ունի զաշխարհն գամրաց: Խեցգետինն՝ զլանջքն և աշխարհ՝ զՀայաստան: Առիւծն՝ ողն և կողքն. և աշխարհ՝ զԱսիայ: Կոյսն զներքին որովայնն, և զաշխարհ՝ զԵլլադացիք: Կշիռն՝ երկու կուշտն, և աշխարհ՝ Լիբիայ: Կարիճն՝ անդամքն և աշխարհ՝ Կրետացիք: Աղեղնաւորն՝ բարձքն և երանքն, և աշխարհ՝ զԻտալիայ: Այծեղջիւրն՝ զերկու ծոնկան, և զաշխարհ՝ զԱսորեստան: Զրոհսն՝ սրունքն և զաշխարհ՝ զԵգիպտոս և զԿաֆա: Զուկն՝ զերկու թաթ ոտիցն և աշխարհ՝ զՀնդկաստան:

Եւ է երկոտասան կենդանակերպքն յերկինս՝ երկոտասան ամիս տարւոյն, և ամէն կենդանակերպ է երեսուն աստիճան որ է երեսուն օր ամսու: Եւ է բովանդակ երկինքն՝ երեք հարիւթ վաթսուն աստիճան, որ է երեք հարիւր վաթսուն օր տարւոյն: Իսկ աւելի ատուրքն որ է հինգ օր՝ այլ մանրամասանց հաշիւ կայ՝ այն անտի լինի:

Եւ գիտացիք զի երկնից ի շուրջ գալոյն լինի ծամքն՝ որ է քսան և

չորս պահ աւուրն. և ի ժամացն՝ լինին աւուրքն և յօրերոյն շարաթքն,  
և ի շարաթնոյն՝ ամիսք, և յամսոցն՝ տարիքն, և ի տարեացն լինի ժա-  
մանակն: Եւ է ժամանակն ծնունդ շարժման շրջագայութեանն երկնից:

Թէ ո՞րպէս շարժի և շուրջ գայ գունդն երկնից. և ո՞րպէս գնայ  
արեգակն և լուսին և աստեղքն: Ը

Եւ թէ կամիս գիտել թէ ո՞րպէս ի շուրջ գայ երկինքն, և յայն շուրջ  
գալն թուեալ համարին ժամքն և աւուրքն, է այսպիսի շրջել երկնից. յոր-  
ժամ կէս կենդանակերպ ի վեր գայ ի վերայ երկրիս, որ է կէս կենդա-  
նակերպն տառն և հինգ աստիճան. և տառն և հինգ աստիճանն պահ մի,  
որ է ժամ մի և երբ լման կենդանակերպ մի գայ ի վերայ, ելաւ յօրէն  
երկու պահ:

Եւ հասկացիր այս օրինակաւ. համարեաց՝ թէ դարուն է՝ և արե-  
գակն ի խոյն: Երկու ժամ պահն խոյն գայ ի վեր, երկու ժամ պահ ալ  
Յուլն, երկու ժամ նկաւորն. երկու օրեկոտինն, երկու Առիժն, երկու  
պահ ալ Կոյսն: Այս վեց կենդանակերպս ի երկոտասան պահ աւուրն  
գայ ի վեր ի տիւն, և ապա իրկիւունն լինի, և խոյն մտանէ ընդ արեմուտս  
ի ներքի կիսագունդն և Կշիւն ելանէ յարեւելս, և այսպէս հետ Կշոին՝  
վեց կենդանակերպն ալ ի վեր գայ, մինչև ի լոյսն ի երկոտասան պահ  
գիշերոյն, և լինի ընդ օրն և ընդ գիշերն մին շուրջ գայ երկինքն: Եւ դարձեալ  
խոյն ելանէ. որ արեգակն ի ներս ի լինքն կայ. այս մին կենդանակեր-  
պովս իմացիր զերկոտասանն:

Եւ զի հանապաղ վեց կենդանակերպ ի վերոյ երկրիս լինի և վեց՝ ի  
ներքոյ: Եւ ընդ օրն, և ընդ գիշերն մին շուրջ գայ երկինքն: Եւ դարեգակն  
և զլուսինն և գաստղերն զկնի իւր ի շուրջ ածէ:

Որպիսի օրինակաւ գիտացուք, քն արեգակն և ալ լուսաւորեղ  
ընդ արեւելս երբան: Թ

Բայց գիտացիր և գայս, զի երկինքն՝ յարեւելից յարեմուտս շրջի:  
Եւ արեգակն՝ և լուսին և աստեղք, յարեմոյց յարեւելս գնան, առի ի շեղ  
ընդ հիւսիսոյ՝ ընդ հարաւ՝ իջանեն. և դարձեալ ի հիւսիս՝ բարձրացեալ  
ելանեն և լուսաւորեղ հակառակ երկնային շարժմանն: Զոր օրինակ,  
մարդ մտանէ ի դետ, և ջուրն ի վեր գնայ. զետն յորում է՝ փութով  
անցանէ և զնայ. և մարդն՝ ի ջուրն ի վեր փոքր փոքր կարէ գնալ: Կամ  
զոր օրինակ՝ թէ մրջիմն դնես ի վերայ ջաղցացն քարին, յոր կողմանէ

քարն ի շուրջ գայ, մըջիւնն ընդ դէմ հակառակ նմա ի մին այլ կողմն շարժի և դնայ: Զի արագ շրջադաշութիւնն երկանին յետս գցէ դնա, և նա ի հարկէ ի մին այլ կողմն ընթանայ և երկանն իւր արագութեամբն տանի դնա, ընդ իւր շրջելով:

Ուսանիս և զայս ի լուսնէն, զի յորժամ նոր ծնունդ առնու ընդ մտանել արեգականն, յարեմտից կոյսն երևի և օր քան զօր՝ դէպ յարեկս առնէ զգնացքն: Եւ երբ հնգետասն օր լինի՝ որ լրումն առնու, յարեկս երևի:

Աստի ուսիր, թէ այն որ յամէն օր կու ելանէ յարեկից, և մտանէ յարեմուտս. այն երկինքն է որ դնա ընդ իւր տանի և պատէ զաշխարհ: Այլ ինքն՝ իւր գնացիւքն ընդ արեկս ընթանայ: Եւ այլ վկայ քեզ՝ զարեգական գնացքն. զի կենդանակերպքն ի կարգի և ի կից են ընդ միմեանս. եռոյն և ցուլն եկաւորն և այլն: Եւ արեգակն կատարէ զխոյն և ի ցուլն մտանէ. և զցուլն վճարէ՝ և յեկաւորն մտանէ. և այսպէս ի տարին վճարէ զերկինքն և զերկոտասան կենդանակերպսն: Եւ այն զոր տեսանես, որ յամէն օր կու ելանէ յարեկից, և մտանէ յարեմուտս. այն երկինքն է որ դնա կու բերէ:

### Յաղագս Չորս եղանակաց Տարւոյն: Թ

է և այլազգ շարժումն և ընթացք լուսաւորացոյ. որ ի հիւսիսոյ ի հարաւ իջանեն. և ի հարաւոյ ի հիւսիս ելնեն. և աստի լինի շորս եղանակ տարւոյն. զարուն և ամառն, աշուն և ձմեռն: Զի շորս կողմ է աշխարհի արեկը և արեմուտ, հիւսիս և հարաւ:

Եւ արարեալ են իմաստունքն զաշխարհ՝ երկոտասան բաժին. և մէջ աշխարհի՝ զներքին հնդիկս ասեն: Եւ ի Հնդուտանէ դէպ ի կողմն հարաւոյ՝ շորս բաժին աշխարհիս այն է՝ որ անմարդաբնակ է և անշէն, զի սաստիկ ջերմ է և հրախառն օդ. վասնորոյ՝ այրեցեալ զօտի ասեն: Եւ ի Հնդուտանայ դէպ ի հիւսիս՝ եօթն բաժին է այս միջոցս և է բարեխառն, և առողջ հաւուց. և մարդաբնակ և շէն աշխարհ: Եւ որ յայս եօթնանս յայնկոյս է ի կողմանս հիւսիսոյ, ի սաստիկ ցրտոյն և ի սառնամանեացն՝ անբնակ է ի մարդկանէ և շտեմարան և տեղի է ցրտոյ, և սառն օդոց և հողմոց:

Եւ զի կողմն հարաւոյ՝ հուր և ջերմ, տօթ և տապ է. վասնորոյ՝ այն աշխարհի մարդիկքն յաւելի ջերմութենէն՝ որպէս արջասպով ներկած են թխացած:

Եւ այժմ, զի զիտացիւր զչորս կողմն աշխարհիս, և այլ խմացիւր, զի այն երկրաստան կենդանակերպոյն, որ յերկինս են, ի վերայ աշխարհիս բաժանած են: Զի յորժամ ի խոյն մտանէ արեգակն՝ ուստպապ պահամալ լինի խոյն՝ ի մէջ երկնից է. և իւր զիմաց՝ կշիռն է յարեմոտս. վասն այն օրն և զիշերն հաւասար լինի ի դարնանամոտն. և յայնմհետէ տիւն՝ յամէն օր մասն մի աճէ. զի արեգակն բարձրանայ զէպ ի հիւսիս յամէն օր մասն մի, երեք կենդանակերպովն. խոյ՝ Յուլ՝ Նկատւր. և դարնան եղանակ լինի Զի ի սկսանել զարնան եղանակի՝ արմատք և բոցսք արձակին, մարդք դուարճանան, ծաղիկք պայծառանան, և անասունք, և թռչունք ի ծնունդս գան: Եւ այս երեք կենդանակերպովս՝ պնայով բնդ հիւսիս՝ և ի վճարել զարնան եղանակին՝ մտանէ արեգակն ի խեցղետինն. տիրէ սարատանն. և սկիզբն լինի ամառան եղանակին և լինի յայնմ՝ օրն հնգետասան ժամ. և զիշերն ինն. և յամելով ի հիւսիսակողմն երեք ամիս՝ կենդանակերպովն՝ որ է խեցղետինն՝ Առիւծն և Կոյսն, առնէ զեղանակ ամառան. յամենայն օր մասն մի ցածնալով: Եւ զի հիւսիսոյ կողմն է յայնժամ արեգակն, զցուրտն հալածէ ի ներքոյ երկրի, և զօդն որ ի վերայ երկրի ջեռուցանէ. և զխոնառ գիշութիւնն՝ որ ի ներքոյ երկրի է ծծէ. և զսերմանիս և զպտուղս պարարեալ պնդէ և հասուցանէ: Եւ ի վճարել զամառան կենդանակերպսն մտանէ ի Կշիռն. և սկսանի այնուհետեւ աշունն. և լինի բաղցրախառն և միջակ օդն. և զարձեալ հաւասարին տիւն և զիշերն. և ապա փոքր փոքր ամենայն աւուր մասն մի խոնարհի, և իջանէ բնդ հարաւ. և փոքրանայ օրն, և ցրտանայ օդն, և զայ մտանէ ի յեղանակս ձմեռան: Եւ ի հետանալ արեգականն բնդ հարաւ, և ի ցածանալն՝ զիշերքն մեծանան, և հիւսիսային հողմն զօդն սառուցանէ. և հնչեն հիւսիսային սառնամանիքն, և լինի ձիւնաբեր բերմունք: Եւ այս՝ վասն այնորիկ լինի, զի արեգականն ջերմութիւն ի հարաւ է ի ցած զիհն, և հիւսիսային հողմն զօրացեալ հալածէ զհարաւային ջերմ օդն ի ներքոյ երկրի արգելեալ փակէ, և սառուցեալ պնդէ զերեսս երկրի: Եւ վասն այնորիկ աղբեր ակունքն՝ ձմեռն ջերմ և տաք բղխեն. զի արեգականն ջերմութիւն և հարաւային հրոյն զօրութիւն՝ ի ներքոյ երկրի մտեալ ջեռուցանեն զբնութիւն ջրոյ: Որպէս և յամառնային եղանակն՝ որ արեգակն ի հիւսիս բարձրանայ՝ զցուրտն հալածէ, և ի ներքոյ երկրի փակէ. և վասն այնորիկ աղբերք՝ սառն և ցուրտ բղխեն:

Յորժամ այս երեք կենդանակերպովս կատարէ զձմեռն, որ է Այծեղջիւրն Զրհոսն և Չուկն, մասն մասն աճէ, և բարձրանայ և հասանէ ի մէջ երկնիցն, և ի խոյն, որ և զարուս լինի:

Եւ այսպէս ծանիր զՂըջանն երկնից, և զգնացս լուսաւորացդ, զփոփոխումն եղանակացդ:

Վասն եօթն գօտեացն՝ որք ասին եօթն պարունակք. և կոչի եօթն երկինք: ԺԱ.

Այս եօթն երկինքս՝ եօթն Մոլորականացն տեղի են. և մոլորականքն այսոքիկ են. Զօհալ Մուշթարի, Մառեխ, Շամս, Զոհրայ, Օտարիտ, Ղամար:

Իսկ յորժամ յերկրէս ի վեր իմանաս, Առաջին գօտին Լուսինն է. որ կոչի Հոռոմերէն սիւրիոս, Ֆռանկերէն լունայ, տաճկերէն Ղամար և հայերէն լուսին. և է մօտ երկրիս քան զամենայն աստեղս. և իւր գնացից աստիճանքն՝ նուրբ է և կարծ: Զի իւր կամարն փոքր է քան զամենայն վասնցածութեանն. կենայ յամէն աստիճանս՝ երկու ժամ, պակաս չորս մասն. և ի կենդանակերպն՝ երկու օր և կէս: Քսան և ինն օր և կէսն վճարէ զամենայն երկինքն, և նոր ծնունդ առնու. և լինի ի նորէ ի նոր քսան և ինն օր և կէս:

Երկրորդ գօտին՝ որ ի վերոյ լուսին, Փայլածուն է. Հոռոմերէն եոփիս ասի. դաղմատերէն մէրգուռուշ. տաճկերեն օտարիտ. և վճարէ զիւր երկինքն ի տասն ամիսն:

Երրորդ գօտին՝ Լուսաբերն է. Հոռոմն ափրոդիտէս ասէ. Ֆռանկն վէնուս վէյերուս. տաճիկն զոհրայ. ի տասն ամիսն վճարէ և սա:

Չորրորդն՝ Արեգակն է, Հոռոմն ելինոս ասէ. [Ֆռանկն սօլ.] տաճիկն շամս. և երեսուն օր կենայ ի կենդանակերպն:

Հինգերորդն՝ Հրատն է. Հոռոմն արէս ասէ. Ֆռանկն մարոշ. տաճիկն մառեխ. քառասուն օր կենայ ի կենդանակերպն:

Վեցերորդ՝ վերե հրատին Լուսնթագն է. Հոռոմն Զեւս ասէ. Ֆռանկն Իուպիթեո. տաճիկն Մուշթարի. ի մի աստիճանս երկուտասան օր կենայ:

Եօթներորդ՝ վերե Լուսնթագին՝ Երեւակն է. Հոռոմն Կռոնոս ասէ. Ֆռանկն Սաթուռնուս. տաճիկն Զօհալ. սա ի մի աստիճանն կենայ երեսուն օր և ի երեսուն տարի պատէ զերկուտասան կենդանակերպսն:

Յաղագս օդոյն որ է հոգմն, որ ասի Բամի: ԺԲ

Աստուծոյ սքանչելի արուեստն՝ զմին բնութիւն իրացն ի բազումս բաժանէ. և բազում անուամբք կոչին: Զի ի չորս տարեւրացն մինն քամին է, որ օդ ասեմք. և այս միտս՝ ցեղացեղ անուանք ունին: Զի ասի Հողմն՝ քամի և օդ: Եւ աստի լինի ամպն ձիւնն, եղեամն. աղեղն՝ որ իջանէ, որոտն շանթիքն, ցոլմունք, և փայլակն, և այլ բազում իրք:

## ԹԷ ՈՒՍԱԹԻՐ ԼԻՆԻՆ ԱՅՍՏԻԼԻԿԻ Ի յօղև և ռուպլա: ԺԳ

Նրկու գոլորշիկը որ երանեն յերկրէս ի վեր՝ որ ասեն բոխար, և ի վեր բարձրանան՝ նօսը և անտես աշաց. մինն գէշ է, և միւսն չորս Այն որ գէշն է յաղբերաց ի դեպաց և ի շրոց ելանէ. և այն որ ցամաքն է ի չոր ցամաք գոլորշեացն լինի, և ի հողմոցն որպէս դժուր վերանայ: Այն որ գէշն է՝ անտի լինի բալն սատնամանիքն՝ ամօք՝ անձրեք ձիւնք կարկուտք. և այն որ չոր գոլորշին է՝ որ է բոխարն յաշխարհէս, անտի լինի աղբի հողմք՝ սրտամունք՝ փայլատակունք՝ կայծակն՝ հրձգութիւն, և այլ որ ինչ սոցին նման է:

## ՁԻՆՆ Լ ԲԱԼՆ: ԺԿ

Բալն ի գօրութենէ ամպոյն է. զի յորժամ օդն թանձրանայ, բայդառնայ. և է բալն քան օդն թանձր և քան դամպն նօսը. և ունի սակաւ մի զիջութիւն, որ խոնաւացուցանէ զերեսս երկրի. զոր կոչեմք և մառախուղ:

## ՁԻՆՆ Է ՈՐՈՒՆ Ե ԿԱՅԺԱԿՆ: ԺԸ

Յորժամ հողմն որ է բամին՝ բռնութեամբ հնչէ՝ և ի մէջ ամպոցն մտանէ, յայնժամ զթանձր ամպն պատառէ, և լինի ճայթմունք ի պատառմանէս. զոր և որոտ անուանեմք. և ի հողմոց յիրար շփելոյն և ի ճնշելոյն հուր փայլէ, զայն փայլատակունք ասեն և կայծակաւ: Ձի հուրն յամենայն արարածս խառն է, և աւելի յօղղ. և երբ հատանի հուրն յամպոյն, թէ թանձր ելանէ, յերկիր անկանի և վնաս առնէ, և թէ նօսը ելանէ՝ ոչ թողուն օդքն յերկիր, այլ բնղ օդն ցնդի անլնաս:

## ՁԱՆԱՆ՝ ՈՐՈՒ Է՞Ր ՈՂ ԼԻՆԻ Ե ԿԱՅԺ: ԺԹ

Քանզի ձմեռն ամպն նոսրցեր է. զի ձմեռն հիւսիսային հողմն հնչէ, այն նոսրցնէ դամպն և ստերջ դառնայ ամպն. զի հարաւային օդն է, որ թանձր կացուցանէ դամպն:

## ՆԵ ՔԷ յԻՆՆ ԱՅԻՄԲ Է ՈՐՈՒՄԱԼՆ: ԺԺ

Քանզի ի թանձրութենէ ամպոյն՝ և ի բռնութենէ հողմոյն՝ ղկարէ անձրեն ի վայր հոսիլ. իսկ ի զոռալն՝ և ի պատռիլն թուլանայ հաւասար,

և արկանէ զանձրեն: Եւ զո՞ր օրինակ մայր՝ զմանուկն յորժամ ծնանի, մեծածայն գոռայ, և վասն այն գոռայ, զի զհոգին յինքն քարշէ, որ զշնչական երակսն նեղէ. և զմանուկն ի վայր բերէ և ծնանի: Նոյնպէս և երկիր սառուցեալ և պաղեալ ի ձմեռնային ժամանակն, և պնդեալ զբնութիւն հողոյն. վասն այնորիկ՝ պիտոյ է ձայն որոտալոյն, զի թուլացի բնութիւն հողոյն, և բույսք և սերմունք յերկրէ ի վեր ծնանիցին, և ծառքն ծաղիկս փթթեսցին. և ամենայն ի ձմեռնային կապանացն ի բաց արձակին:

### Յաղագս Աեան և Անձրեկի: ԺԸ

Յորժամ արեգակն ի հարաւային կողմն ցածանայ ի խոնարհ, յայնժամ հիւսիսային կողմն դօրանայ և զօդն յիրեալ խառնէ՝ և թանձրացնէ, որ ամպ լինի և կտրատի և ի վայր հոսի սպիտակ և փրփրատեսակ. զի ցուրտ քամին՝ զնօսրութիւն ջրոյն այսպէս առնէ:

Երբ թանցր և մեծ թափի ի վայր, այն տաղատարափ ասի. և որ նօսր և մանր՝ այն ձիւն կոչի: Իսկ ի գարնանային ժամանակն՝ ի յամառնային և յաշնանայինն՝ օդն ժողովէ զջուրն ի ծովէ և ի գետոց, և առեալ յերկրէ ի վեր բարձրանայ. և ի քաջ ամպոց թոթափմանէ լինի անձրեւ. զի ի գարնան ժամանակն օդն պարարտանայ ի գիշութենէ ջրոյն, և յարեգականն ջերմութենէն թանձրանայ և խոնարհի ի ծովն, և առեալ բարձրանայ. զի հողմն ի ներքոյ անցեալ առեալ տանի. և հողմոյն դոռալովն և որոտալովն՝ օդն պատառի և թուլանայ և անձրեն ի վայր հոսի:

### Յաղագս Կարկախի: ԺԹ

Կարկուտն լինի ի սաստիկ և ի ցուրտ դամուտն որ շնչէ ի հիւսիսոյ կողմանէ. և ի սաստիկ փչմանէ հողմոյն՝ ոլորելով բոլորէ և պնդէ զնօսրութիւն ջրոյն, և շաղկւով յերկիր թափէ. է որ ուժով և խիստ. և է որ նուազ. և այս լինի ի խրատ և ի պատուհաս մեղուցելոց:

### Թէ ուստի՞ լինի Յօդն և Եղեամն: Ի

Լուսավորքդ՝ օգով զջուրն ծծեն և ի վեր քաշեն. երբ արեգակն ծագէ, թուլացուցանէ զօդն. և այն որ մնացեալ է ի յօդն ի գետինն իջանէ և ցօղ կոչի այն իսկ ի ցուրտ ժամն՝ թերասառուց լինի և կոչի եղեամն:

Զի՞նչ է Աղեղն, որ իջանէ, որ ասեմ տէրունի գօտի: ԻԱ

Պատճառ աղեղն իջանելոյն՝ գիշտութիւն օգոյն է, և շերմութիւն արեգականն: Զի ի փարատել անձրեւին՝ զիճութիւնն՝ որ յօղն է մնացեալ և արեգականն շերմութիւն յիրեար խառնին. օգոյն զիճութիւնն ի ներքուստ, և արեգականն նշուչքն ի վերուստ միաբանին, և ի նօսրութիւն օգոյն՝ գոյնագոյն և երփնեքին երեի կամարածն՝ որպէս գերկնային զգունդն: Զի զոյն երկրիս՝ և կանաչագեղ բուսոցն՝ և շրոց և հրոյ՝ չիրեար խառնին, և այնպէս երեկոյն Թէ մէկ մի է գօտին որ երեի, նշան դադարելոյ անձրեւին է, և պարզելոյ. և թէ երկու երեի յայլ և այլ գի՞հ, զյորդ և զսաստիկ անձրեւ նշանակէ: Եւ ի սկզբանէ աշխարհի էր սա զի հեռեանք է տարերցս. որպէս ծովին հեռեանք է հրոյ. որ քամի գէ՛ւ խոնաութիւնն ի հրային կրակոյն, և ապա յրստակի բոցն հրոյն: Վասն աշտորիկ ետ աստուած ի նշանս՝ ի յորդութիւն անձրեւացն դադարման:

Թէ զի՞նչ է ևուրն, որ յերկնից անկանի և ճանի՞ ազգ են սոքա: ԻԲ

է ազգ մի՞ որ շանթիք ասեն, որ ի հրեղէն երկնիցն կտարատի և ի վայր հոսի և չգաղարի ուրեք. այլ յորժամ յերկիր անկանի, ծակէ զթանձրութիւն երկրի, և զոր ինչ գտանէ աչրէ, և ընդ թափն ի վայր անցանէ ի ներքի կիսադունտն յիւր ազգակիցն ուստի անկեալն է:

Եւ է ազգ մի՞ որ յորժամ ի սաստիկ ամպոցն՝ հողմով ծովն խառնակի, որ յատակ ծովուն և աւաղն շերտն շրջի և օղն առնու դաւազ խառն ջուրն, և ի վեր վերացնէ ջրովն, և տանի ի բարձրն ի հրախառն և ի տաք օղն փչէ և շփէ, և վառէ որպէս զհուր, և ի վայր թափէ. և յորժամ յերկիր հասանի՝ յոր ինչ զիպի աչրէ և անցանի, և մնայ որպէս երկաթի քափշայ:

Եւ է ազգ մի որ ասեն թէ աստղ թռեալ, և աստղ ոչ թռչի. այլ յորժամ ընդ շրջակայ պարունակս երկնից հնչէ, և սաստիկ արագապէս անցանէ ընդ որ գնայ, զօղդ որ տաք է և հրախառն՝ որպէս զձոր պատառէ, և երկայնութեամբ երեի, և թուի թէ աստղ թռեալ:

Եւ է ազգ մի՞ որ ի պատառել օղոյդ ի սաստիկ հողմոյն վերին լոյսն հրակերպ երեի և օղն որ պատառեցաւ յիրուր գալն և ի կցիլն ծածկի դարձեալ. և մեր դաստիկ ասեմք թէ աստղ թռեալ:

Նոյնպէս և այն՝ որ կայծկտալ ասեն զի յորժամ ամպն պատառի, ի գոռալոյն որոտն լինի և յիրուր շփելոյն կայծակն լինի: Զի որպէս հրահան երկաթն՝ որ զկայծ քարն բաղխէ, ելանէ ձայն, և ելանէ հուր. նոյնպէս յորժամ հողմն զամպն պատառէ, ի պատառելն զորոտն առնէ և հողմն ի յամպոյն հուր հանէ, և ի տեղի ուր անկանի վնասէ:

Յառաջն որոտն է, և ապա կայծակն. բայց մեք յառաջ զհրոյ լոյսն տեսանեմք, և ապա զորոտն լսեմք. զի աչքն այլ սուր է քան զականջն. և ական զհեռուն տեսանէ, և ականջն զմօտն լսէ. վասն այնորիկ զլոյսն ի հեռուն տեսանեմք, և յորժամ ձայնն ի վայր հասանի և մօտի ի մեզ ապա ականջն լսէ: Եւ այս յորժամ ի պարզ ժամն լինի, թուուցած աստղ ասեմք:

Թէ զի՞նչ է այն որ Լուսինն քակ ունենայ: Ի՞՞

Քանձր օդդ՝ որ ունի բոլոր զճառագայթ լուսնին, և նշույթն ի դուրս ալեալ ընդ Քանձր օդն՝ բոլորակ լինի. և է նշան ամպոց:

## Վ Է Ր Զ

առաջնոյ մասին տետրակիս:

(«Տետրակ համառոտ եւ լի իմաստնախոհ բանիւք», Նախիջևան, 1792 թ. էջ Ժ—Թ, 1—20):

А. Г. АБРААМЯН, Г. Б. ПЕТРОСЯН

### НОВОВЫЯВЛЕННАЯ РУКОПИСЬ ТРУДА ИОАННА ЕРЗЫНКАЦИ «О ДВИЖЕНИИ НЕБА»

#### Резюме

Иоани Ерзынкаци-Плуз, армянский ученый XIII века, по просьбе барона Умека изложил письменно содержание лекции «О движении неба...», прочитанной им в 1284 году в Тбилиси. Печатное издание этого труда осуществлено в 1792 году в Новом Нахичеване (недалеко от Ростова). Основой для указанного издания явилась рукопись Матенадарана № 2018 (старый номер—2048), относящаяся к 1621 году. Русское издание труда Ерзынкаци в переводе профессора Лазаревского института Н. О. Эмина было осуществлено в 1861 и 1897 годах.

Текст указанного труда обнаружен в более ранней рукописи (№ 2174), относящейся к 1309 году. Эта рукопись записана спустя лишь 16 лет после смерти автора, поэтому можно принять, что в ней содержится оригинал текста Ерзынкаци.

Сравнение текстов показывает, что текст в рукописи № 2018, служивший основой для печатных изданий и исследований, является пространной редакцией текста оригинала, в который добав-

лены отдельные новые главы и внесены существенные текстовые изменения и дополнения. Объем текста в рукописи № 2174 примерно в два раза меньше.

Приводятся тексты труда «О движении неба» в пространной и краткой редакциях.

Более детальное рассмотрение содержания нововыявленного текста даст возможность точнее охарактеризовать космогонические концепции Ерзынкаци.

#### Գ Լ Ա Շ Ա Ն Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն

- 1 Մուսաբյան Ա. Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958.
- 2 Переводы и статьи Н. О. Эмина, М., 1892.
- 3 Տեր-Պետրոսյան Ավ. Բիսդղիական մարի դարձացումը Հայաստանում, Երևան, 1960.
- 4 «Արարատ», 1896, հ. 2.
- 5 Երևիկյան Մ. Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1944.